ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«21» հոկտեմբեր 2022թ. N 446/ԿՊ

ք. Ստեփանակերտ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ՓՈՒԼԵՐԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարի 2018 թվականի հուլիսի 31-ի N 234-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի գրավոր և բանավոր փուլերի հարցաշարերը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:
2. Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժնի վարիչ Ն. Նիկողոսյանին՝ հաստատված հարցաշարերը տեղադրել նախարարության edu.nk.am կայքէջում, «Լուսարար» պաշտոնաթերթի խմբագիր Ս. Խաչատրյանին՝ հարցաշարերը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Մ. Համբարձումյանին:

Ա. Հակոբյան